



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՌԱՆՑ ԿՐՈՆ
=ԹԵ ԿՐՈՆԻ ԴԵՍ



ՊԵՏԱԿԱՆ 1930 ՏՎ Վ.Ա.Ն. 1930




Բ. Ա. ՄԱԿԱՐՈՎ

2

ԱՌԱՆՑ ԿՐՈՆԻ =
= ԹԵ ԿՐՈՆԻ ԴԵՄ

1778-0
A 1
4346



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՈՒԿՉՈՒԹՅՈՒՆ. — Ե ԵՐԵՎԱՆ. 1980

ՀԸ. № 1335.

Դրառեղվար № 5284 (բ).

Տիրաժ 5000.

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում
Պատպել № 99.

ՎՈՐՃԵՂԻՑ ԾԱԳԵՑ ԿՐՈՆՅ

Ամենահին ժամանակներից կրոնը ծառալել և վորպես զործիք դասակարգալին ճնշման, ինչպես միջոց աշխատավորներին ստրկացնելու:

Շատ հին ժամանակներում, յերբ դեռ նոր եր ծնունդ առնում մարդկալին համալինքը, մարդիկ ապրում ելին փոքրիկ, միմանցից անջատ, մեկուսացած խմբակներով: Անկարող լերկիրը մշակելու, արհեստներին դեռ անգիտակ, շրջապատող բնության դեմ անզոր, այդ մարդկալին խմբակները թափառում ելին իրենց սնունդ ու հարմարավոր կայան գտնելու համար:

Անհիշելի ժամանակներից նրանց մեջ առաջ յեկան արդեն «առաջնորդներ», վորոնց հպատակության տակ եր գտնվում վողջ խմբակը: Աչքի ընկնող ֆիզիկական ուժը, դիմացկունությունը, շրջապատող բնական պարմանները մյուսներից լավ ըմբռնելու ընդունակությունն ու խմբին լավ արոտատեղեր ու կայաններ ցուցադրելու շնորհքը — ահա թե ինչն եր սկզբնական շրջանում առաջ քաշում այդ «առաջնորդներին»:

Պատերազմական հաջողությունները հարեան — մարդկալին «ոտտար» խմբակների հետ ընդհարվելիս, ավելի ևս ամբապնդում ելին «առաջնորդներին դրությունն ու աստիճանաբար նրանց ձեռքը կենտրոնացնում ամրող իշխանությունը»:

Սկզբներում այդ առաջնորդների համար հեշտ եր իշ-

խանությունն իրենց ձեռքին պահել ուղղակի կոպիտ ուժի միջոցով։

Իրենց շրջապատելով մի խումբ զինված մերձավոր-ներով, առաջնորդները նրանց ոգնությամբ հպատակեցնում ելին վհչ միայն իրենց խմբակներին, այլ և նվաճած խմբակներին։ Ամեն վոք, ով կհանդիներ հակառակել առաջնորդի կամայականությանն, ուղղակի լենթարկվում եր վոչնչացման։

Ժամանակի ընթացքում մարդիկ աստիճանաբար սկսեցին իշխել բնության վրա։ Նրանք սովորեցին հո-ղը մշակել, վորը դարձրեց նրանց նստակյաց։ Մար-դիկ սկսեցին ապրել վհչ թե փոքրիկ խմբակներով, ինչպես առաջ եր, այլ մեծ գլուղերով։

Առաջնորդների համար արդեն դժվար եր մեն-միայն կոպիտ ուժի միջոցով իշխանությունը պահել իրենց ձեռքին։ Գետք եր միջոց գտնել իրենց իշխանությունն ամրապնդելու, պետք եր ավելի ամուր ու խորը ներ-շնչել ստրկացած խմբին իրենց առաջնորդին հնագանդ վելու անհրաժեշտությունը։

Յեվ ահա ալղպիսի միջոց հանդիսացավ կրօնը։

Նախնի, հին մարդը բացարձակապես վոչնչ չեր հասկանում իրեն շրջապատող բնությունից։ Զգիտեր նրա որենքները, չեր կարողանում ուղիղ բացատրել նրա յերեսութներն ու ամբողջապես կախված եր նրա ուժերից։ Գետի ափին շինում եր խրճիթ, հանկարծ հեղեղը գալիս, տանում եր այն։ Վորսից հետո հանդըս-տանում եր, փոթորիկ եր բարձրանում ու հենց իր կողքին կալծակն սպանում մի քանի մարդ։ Ընկերոջ հետ անտառում գտնում ելին մի նոր, չտեսնված բույս, ընկերն ուտում եր ալղ բույսն ու հանկարծ սկսում

եր կծկվել, ու հետո բոլորովին դադարում շարժվելուց
ու մեռնում։

Հին մարդը չեր հասկանում, թե ի՞նչից և առաջ
գալիս հեղեղը, ի՞նչ բան և փոթորիկը, չգիտեր, վոր
վորոշ բուլսերի մեջ թույն կա։ Անկարող այս բոլորը
բացատրելու, նա կարծում եր, թե իր շուրջը ապրում
են ինչվոր խորհրդավոր ելակներ - հոգիներ, վորոնք և
զեկավարում են բնությունն ու մարդկանց կյանքը։
Այդ անհասկանալի, խորհրդավոր ելակները, վորոնց
հնարել եր ինքը մարդը, սկսեցին կոչվել «աստված-
ներ»։ Շրջապատում կատարվող ամեն ինչ մարդիկ
բացատրում ելին այդ «աստվածների» կամքով։ Զլուն,
անձրե, սառնամանիք, շոգ, ամառ, ձմեռ, որվան ու
զիշերվան փոխանակումը, լավ ու վատ բերքը - այս
ամենը հին, տգետ մարդու կարծիքով աստվածներն
ելին ուղարկում։ Յերբ այդ յերեսութներն ոգուտ ելին
բերում մարդկանց, այդ վերագրում ելին «բարի աստ-
վածների» կամքին և ընդհակառակը՝ բոլոր դժբախ-
տությունները նրանց կարծիքով առաջանում ելին «չար
աստվածներից»։ Աստվածներին հոգուտ իրենց տրա-
մադրելու համար մարդիկ սկսեցին նրանց գութը հայ-
ցել աղոթքներով, զոհերով, հմայքներով։ Աստիճանա-
բար կազմվեց կրոնական ծեսերի մի ամբողջ սիստեմ։

Ահա առ աստված առաջացած այդ հավատից, վոր
ծնունդ առավ մարդու անկարողությունից ու բնու-
թյան ուժերի հանդեպ տածած յերկուղից, կարողացան
ոգտվել առաջնորդներն իրենց բոնակալական իշխա-
նությունն ամրապնդելու համար։ Նրանք սկսեցին
իրենք իրենց հայտարարել աստվածների գլխավոր
պաշտոնյաներ կամ քուրմեր։ Համոգելով մասսաներին,

թե իրենք մերձավոր հարաբերության մեջ են աստվածների հետ, առաջնորդներն իրենց իշխանությանը տվին առանձին «սրբազն» բնույթ։

Իրրե որինակ, թե ինչպես կը ո՞ն ոգտագործեցին իրենց տիրապետող դրությունն ամրապնդելու համար, կարելի է բերել թեկուզ այն, վոր Հռովմելական կայսրը միաժամանակ կը ում եր և «կերագույն քրմապետի» տիտղոսը։

Այսպիսով առաջնորդ-թագավորներն աստիճանաբար սովորեցրին իրենց հպատակներին նայել իրենց վրա իրրե այնպիսի մարդկանց, վոր կարող են հաշոեցնել աստվածների հետ, հայցել նրանց վողորմածությունը։ Իրենց իշխանությունը, վոր ծնունդ եր առել ու պահպանվում եր մեն-միայն բռնի ուժի ոգնությամբ, նրանք հայտարարեցին «աստվածներից» արված իրենց, իսկ հասարակական հարաբերությունների իրենց համար ձեռնտու կարգերը, վորոնց շնորհիվ մի բուռն իշխողներ հարստահարում ելին մեծամասնության, հայտարարեցին «աստվածների հրամանով» հաստատված։ Այդ պատճառով ել իրենց իշխանության դեմ առաջ լեկած ամեն մի բողոք նրանք հայտարարում ելին իրրե անհնագանդություն հենց «իրեն՝ աստծու» դեմ։

Այսպիսով դեռ հնագույն ժամանակներում կը ո՞ն սկսեց «փառաբանել» ու աջակցել դասակարգային ճնշմանը։

Վորպեսզի կը ո՞ն ստրկացման ավելի հուսալի գործիք դարձնեն իրենց ձեռքն, տիրող դասերն ամեն կերպ աշխատում ելին ստիպել տշխատավորներին մռանալ նրա (կը ո՞ն) աշխարհային ծագումը։ Կը ո՞նի ծագություն հայտարարվեց իրրե սուրբ, հրաշքով տռաջա-

ցած մի գործ։ Մասսաներին ներշնչում ելին, թե
կըոնական տմեն մի ուսմունք ծնունդ և առել հենց
«իրենից՝ աստծուց», վոր ալդ ուսմունքներն աշխարհ
են բերել ու մարդկանց պարզել «աստծու առաքյալ-
ները» Մովսեսը, Հիսուսը, Մուհամմեդը, Բուդան
և այլն։ Այս խնդրում համերաշխ են ու իրար նման բո-
լոր կրոնները։

Տիրապետող դասերը շատ ճիշտ հաշվի ելին առել,
վոր ինչքան խորհրդավոր ու գերբնական թվա հավա-
տացլաներին կրոնի ծագումը, տյնքան ամուր ու
հուսալի կլինի աշխատավորներին ստրկացնելու հա-
մար նախանշանակված կրոնական սանձը։

ԿՐՈՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Հին ժամանակներում կրոնը բացարձակ ու հայտ-
նապես միացած եր աշխատավորների թշնամիների
հետ՝ նույն անձնավորությունը և՛ թագավոր եր և՛
քուրմ։

Ժամանակի ընթացքում այդ գրությունն արտա-
քուստ փոխվեց։ Կրոնական ծեսերի կատարումն ան-
ցավ առանձին դասի՝ հոգեորականության ձեռքը։
Բայց կրոնի նշանակությունն, իրըև դասակարգալին
ճնշման միջոց, մնաց նույնը։ Դեռ ավելին՝ կրոնի ազ-
գեցությունը մասսաների վրա ուժեղացավ։

Կապիտալիստական պետությունը չափազանց նպաս-
տավոր հող և ստեղծում կրոնի զարգացման համար։
Յեթե առաջվան վայրենին կախումն ուներ իրեն ան-
հասկանալի բնության ուժերից ու նրանց մեջ տեսնում
եր «աստծու կամքի» արտահայտությունն, ապա կա-

պիտալիստական հասարակական պայմաններում աշխատավորներն անհամեմատ ավելի ծանր կախումի մեջ են գտնվում։

Գլուղացին, վոր իր տնտեսությունը վարում ե չկատարելագործված միջոցներով, ամբողջապես կախումն ունի բնությունից՝ յեղանակից, անձրև գալու ժամանակից, ձմռան ցրտերից ու գարնան տաքությունից։ Նա տեսնում ե, վոր իր բերքը կախված ե այս բոլոր յերկութներից։ Յեզ նա յել շարունակում ե այս ամենը բացատրել «աստծու կամքով»։ Իսկ կապիտալիստական անպլան տնտեսության մեջ շարունակ տատանվող հացի ու գյուղատնտեսական մլուս մթերքների գներն ավելի ևս ամրապնդում են գյուղացու։ հավատը գեպ տստված։ Գների աատանումը, վորից կախված ե նրա բարեկեցությունը, նա նույնպես բացատրում ե «աստծու վողորմածությամբ» կամ «աստծու պատուհասով»։

Կապիտալիստական հասարակության զարգացման որենքով փոքր տնտեսությունները միշտ կուլ են գնում խոշոր տնտեսություններին։ Կապիտալը քայքայում ե փոքր տնտեսատերերին, բայց նա իր քայքայումը բացատրում ե դարձյալ նույն «աստծու կամքով»։

Սոցիալիստական տնտեսավարության հակադիր, կապիտալիստական տնտեսությունը գուրկ ե ընդհանուր, միասնական պլանից։ Ուժեղ գործարանատերը խեղդում ե իրենից թուլլ հակառակորդին, վորն ստիպված ե լինում կրճատել իր արդյունաբերությունն ու արձակել բանվորներին։ Բայց մի փոքր հետո ապրանքների գերարտադրությունն հարկադրում ե և հաղ-

թողին կըճատել բանվորական ուժն իր գործարան-ներում։ Թե այս և թե այն դեպքում բանվորն հան-դիսանում ե փողոց շպրտված, իսկ կրանքը, վոր առանց այն ել ծանր ե ու ստրկական, դառնում ե ավելի ծանր ու դաժան։ Կապիտալիստական տնտեսության արդ ցնցու մներից տուժող լետամնաց բանվորները, չհասկա-նալով իրենց դժբախտության իսկական պատճառը, բա-ցատրում են այն «աստծու կամեցողությամբ»։

Մինչդեռ ըստ յերեսութին այդ «անսպասելի» ու «պատահական» յերեսութները կրանքում կարող են վերացնել մեն-միայն իրենք—աշխատավորները։ Դրա համար անհրաժեշտ ե, վոր աշխատավորները թոթա-փեն կապիտալիստների իշխանությունն ու իրենք կա-ռուցեն մի նոր խելացի կրանք։ Այդ կրանքի ուղին—դասակարգային կոիմն ե։ Կապիտալիստական յերկը-ների գիտակից բանվորներն ու գլուղացիք անհաջո-դասակարգային կոիվ են մղում կապիտալի դեմ, իսկ յետամնացները, դասակարգորեն անգիտակիցները շա-րունակում են տանջվել, հավատալ աստծու և միի-թարվել ինչ վոր «անզրգերեզմանալին յերջանկու-թյան» հեքիաթներով։

«Աշխատավոր մասսաների սոցիալական ճնշվածու-թյունը, նրանց յերեսութական բացարձակ անզորու-թյունը կապիտալիզմի կույր ուժերի հանդեպ, վորոնք ամեն որ, ամեն ժամ հազար անգամ ավելի դաժան տանջանքներ ու սոսկալի չարչարանքներ են պատճա-ռում շարքային բանվոր մարդկանց, քան ամեն մի արտակարգ դիպված, ինչպես պատերազմը, յերկրա-շարժն և այլն, —ահա թե ինչումն ե կըոնի ժամանա-կակից ամենախորը արմատը»։ (Լենին. «Բանվորա-

կան կուսակցության վերաբերմունքի մասին դեպ
կրոնը։ Յերկերի ժողովածու Տ. հատ. մասն 1. յերես
253—254)։

Կտպիտալիստական հաստրակության պայմաններում
կրոնը ծաղկում և փարթամ ու թունավոր ծաղկով։ Ու
նրա վողջ դերը կայանում և աշխատավորների դասա-
կարգային ճնշման մեջ։

ՈՒԽՄՆ Ե ԾԱՌԱՅՈՒՄ ԿՐՈՆԸ

Հավատալ աստծու—նշանակում և ընդունել, վոր
ամբողջ աշխարհն ու մարդկանց կյանքը զեկավարում
և ինչվոր գերագույն, մարդկային մտքին անհասանե-
լի մի եւակ։ Այդ խորհրդավոր եւակը կոչվում և աստ-
ված։ Հավատացյաները համարում են, թե աստված
և կարգադրում մարդկանց գործերն իր կամքի համա-
ձայն, վորին յերբեք ու վոչ վոք չի կարող հասու
լինել ու հասկանար։

Կրոնական ուսմունքի համաձայն ամեն ինչ աշ-
խարհում նախորոշված և, այսինքն նախորոք վճռված
ու կարգադրված աստծուց։ Վողջ կյանքն ընթանում և
«աստծու նախագծած» ուղիով, վորն հայտնի յեմիայն
իրեն՝ աստծուն։

Յեթե այդպես և, ուրեմն վոչ մի հավատացյալ իր
կյանքում չպիտի դնի և վոչ մի ինքնուրույն խնդիր,
չպիտի հոգա իր ուժերի ու ընդունակությունների զար-
գացման մասին։

Յեվ ինչու հոգալ ու անհանգստանալ, ինքնին հարց
և ծագում, քանի վոր ինչ ել անհս, միենույն և, ար-
դեն նախավճռված և աստծու նախախնամությամբ։
Մարդ ձգտում և հաւանել մի բանի. որինակ, հենց թե-

կուզ սովորել զուռնա ածել: Բայց ի՞նչ ոգուտ քո ձըգ-
առամից, յերբ կրօնական ուսմունքն աստվածալին
նախախնամության մասին արդեն «նախավճռել ե»,
թե զու կարմղ ես զուռնաչի լինել, թե վոչ. յեթե
աստծու հաճելի յե՛ զու զուռնա նվազել կսովորես,
իսկ յեթե վոչ, հարյուր տարի յել տանջվես, վոչինչ
զուրս չի գա:

Այսպիսի ուսմունք դավանելուց հետո, պարզ ե, մար-
դիկ յերեք չեն կարող իրենց կյանքը վերտառուցել
այնպես, ինչպես իրենք են կամենում: Յեվ նախա-
խնամության ուսմունքի նպատակն ել հենց ալդ ե,
վոր արմատախիլ անի մարդկանց միջից իրենց կյանքն
իրենց ուղածին պես կառուցելու ամեն մի ձգտում ու
յեռանդ: Ստրկացած բանվորների ու գլուղացիների
կյանքն անտանելի յե գործարանատիրոջ ու կալվա-
ծատիրոջ ճնշման տակ: Ապստամբվում են նրանք,
փորձում ազատվել իրենց ճնշողներից: Մինչդեռ կրոնը
հոգատար կերպով պաշտպանում ե ճնշողների շահերը՝
«Ուրախ յեղեք, յերը ձեզ կճնշեն ու կհալածեն, վասն
դի մեծ հատուցումն կստանաք յերկնքում»—ներշնչում
և ավետարանն աշխատավորներին:

Կապիտալիստների ու կալվածատերների ամենաբըռ-
նակալ, խիստ ու արյունարրու իշխանությունն անգամ
կրոնը նախորոք արդարացնում ե նրանով, վոր «ամեն
մի իշխանություն աստծուց ե»: Յեվ «աստծու դրած
ալդ իշխանությունն» ինչպես ել տանջի աշխա-
տավորներին—պահելով նրանց աղքատության մեջ ու
ամենաչին բողոքի համար գնդակահարելով,—կրոնը
միշտ պաշտպան ե կանգնում ճնշողներին, արդարաց-
նելով ու ամեն կերպ աջակցելով նրանց:

Ճորտատիրական շքջանում, լեռը կալվածատերերը
գլուղացիներին տանջում ելին, խարազանելով մինչ ի
մահ,—կրոնն արդարացնում եր կալվածատերերին
նրանով, թե նրանք—կալվածատերերը պատասխանա-
տու լեն աստծու առաջ իրենց ստրուկ ճորտերի հո-
գիների համար, այդ պատճառով ել իրավունք ունեն
այդ հոգիների հետ վարչելու այնպես, ինչպես իրենց
և հաճելի:

Կյանքի բոլոր դիպվածներում կրոնն հանդիսա-
նում ե միշտ գասակարգային ճնշման նեցուկ:

Ամեն մի կրոնի տերտեր ներշնչում ե իր հավա-
տացալներին, թե միայն իրենց կրոնն ե ճշմարիտ ու
աստվածահաճու և բոլոր այլադավաններն իրենց թշնա-
մին են: Բոլոր կրոնների ուսմունքի համաձայն դուրս
ե գալիս, վոր կտպիտալիստն ու նրա ձեռքի տակ
ճնշվող բանվորը, լեթե նույն կրոնն են դավանում,
հանդիսանում են լեղբայըներ: Իսկ դրա հակառակ
քրիստոնյա-բանվորն ու հրյա-բանվորը, վոր միատե-
սակ ճնշված են իրենց դասակարգային թշնամու՝ կա-
պիտալիստի ձեռքով, կրոնի ուսմունքով իրար թշնա-
միներ են, վորովհետեւ տարբեր կրոններ են դավա-
նում:

Ցեվ այսպես են քարոզում բոլոր կրոններն ան-
խտիր:

Սակայն կրոնը չեր բավականանում միայն նրանով,
վոր կրոնական խտրություն ու թշնամություն եր
ցանում նույն պետության աշխատավորների մեջ:

Ցարական ժամանակներում կրոնը ներշնչում եր
բանվորներին ու գլուղացիներին, թե կյանքը մեծ ա-
ռաքինություն ե, վոր տրված ե «հավատին, թագավո-
րին ու հայրենիքն» ծառայելու համար:

Թագավորը՝ կալվածատիրական-բուրժուական պետության զլուխն ե, ղրա համար ել կրոնը քարոզում եր «կյանքը չխնայել» նրա համար:

Հայրենիք—դա պետությունն ե, ուր մի բուռն բոնակալների իշխանության տակ ապրում ե անագին աշխատավորությունը: Աշխարհում կան շատ բուժուական պետություններ, ուր մի խմբակ բռնակալ-հարուստների իշխանության տակ ապրում են միլիոնավոր աշխատավորներ: Ցեղ ահա վորպեսզի խանգարեն զանազան պետությունների ալդ աշխատավորներին միանալ միմյանց հետ ու միասին կովել ընդհանուր թշնամու դեմ, ամեն մի յերկրի կրոնավոր հավատացնում ե իր յերկրի աշխատավորներին, թե մյուս պետության աշխատավորներն ոտար են իրենց, թշնամի, վոր հավատացյալ մարդը պարտավոր ե պաշտպանել իր հայրենիքը: Խոկ «հայրենիքի» ներսում, կրոնի հովանու տակ տիրում ե դասակարգային սոսկալի ճընշում:

Այս բոլորից հետո զարմանալի չե, վոր վերջին համաշխարհային իմաստերիալիստական պատերազմի ժամանակ կրոնի պաշտոնյաներն ամենայն յեռանդով դրզում ելին զանազան յերկրների աշխատավորներին իրար դեմ, ընդ վորում ամեն մի յերկրի կրոնավոր խոստանում եր նրանց «իր» աստծու աջակցությունը:

Աշխատավորներին միմյանցից անջատելու այս փորձված միջոցով՝ գրգռելով նրանց կրոնական տարբերությունը, ոգտվում են ալժմ արտասահմանի կապիտալիստներն իրենց իշխանությունն ամրապնդելու համար ծայրահեղորեն շահագործվող կալոնիաներում,

ինչպես այդ լերեւան լեկավ մոտ անցրալում կրոնական արքունալի ընդհարութիւններով, վոր առաջ բերին անգլիացի կապիտալիստներն ձնդկաստանում բանվոր մահմեղականների ու բանվոր հնդիկների միջև։ Նույն բանը սարքեցին անգլիացիք և Պաղեստինում, լերկպառակութիւնուն դցելով արաբների ու հրյաների մեջ։

Այսպես ե կրոնը ծառայում կապիտալիզմին։ Դասակարգական թշնամու բոլոր հանցանքները կրոնը քողարկում ե «աստծու» անունով։

ԱՌԱՆՑ ԱՍՏԾՈՒ, ԹԵ՞ ԱՍՏԾՈՒ ԴԵՄ

Մեր լերկրում հեղափոխական, սոցիալիզմ կառուցող կարող ե լինել միայն նա, ով չի հավատում վհչ մի աստծու, ով ազատ ե կրոնական թույնից։ Մակայն բավական չե, վոր ամեն մի գիտակից բանվոր ու գրուղացի հենց ինքը միայն ազատազրվի կրոնի քայլականութիւնից։ Սոցիալիզմի կառուցումն ու դասակարգական հաջող կոիմն անհնարին և տռանց կրոնի դեմ պայքարելու։

Վհչ միայն առանց ասծու, այլ և ասծու դեմ—ահա թե ինչը պիտի լինի մեր լոգունգը։ Մենք պետք ե մղենք ամենահամառ, վճռական պայքար կրոնի դեմ, հավատի ու աստծու դեմ։

Հարուստներն ու լեկեղեցականները հարյուրավոր արքինների ընթացքում ներշնչել են աշխատավորներին հավատ առ աստված։ Կապիտալիստական անկանոն, անպլան, գիշատիչ տնտեսութիւններն, ինչպես մենք տեսանք, ամենանպաստավոր հող եյին ստեղծում ալլ հավատն աշխատավորների մեջ ամրապնդելու համար։ «Առանց աստծու կամքի տերեն ել ծառից ցած

չի ընկնի»—ասում ե հին առածը։ Մարդկային կյանքի ամեն մի քայլափոխ կրոնի պաշտոնական ծեսերով։ Վճէ միայն մարդու ծնունդն ու մահը (մկրտություն ու թաղում) այլ և կյանքի բոլոր նշանավոր դիպվածները կրոնը կարողացել ե ոգտագործել իր նպատակների համար։ Ամուսնությունը նա դարձրել ե «խորհուրդ» ու առանց կրոնական ձեակերպման (պսակի) ամուսնությունը միտք չուներ առաջ։ Հիվանդանում եր մարդ—կրտնիսկուլն հասնում եր և ալստեղ իր հատուկ «խորհուրդներով»—փարատյաններով, բժշկության աղոթքներով, խոստովանությամբ ու հաղորդությամբ։ Կենցաղային վոչ մի ձեռնտրկ չեր անցնի առանց կրոնի սրբագործման առանց աղօթքի։ Կոր շինության հիմքը, ցանքսի սերմը, կալն ու կուտը, նոր ջրհորը, նորահարսի ու փեսի շորը և այլն պետք ե «սրբագործեր», որհներ տերտերը։

Կրոնը բառացի մտքով հսկում եր մարդու ամեն մի քայլը, վորպեսզի տիրանար նրան, իշխեր նրա վրա։ Յեզ այս խնդրում ամենանպատակահարմար համարվեց ոգտագործել մարդկանց հավատը «զեպ աստծու ընտրյալները», սրբերը։

Կրոնական մի հին ձեռագրում հավատացյալներին մի ալսպիսի խըտա և տրվում։

«Յերբ մտադիր ես նավակով ճամբա գնալ—հիշիր Գարրիել հրեշտակապետին։ Յեթե ճանապարհ գնաս լճերով կտմ անապատներով, հիշիր Ռողայիլա հրեշտակին։ Զուր խմելիս՝ հիշիր նոյիլ հրեշտակին, քնելիս՝ Պոմալիլ հրեշտակին։ Տիսրության ժամիդ հիշիր Աֆանայիլ հրեշտակին։ Տուն շինելիս հիշիր Մի-

սայշիլ հրեշտակին։ Մեղրաջուր կամ գարեջուր լցնելիս հիշիր Ռաֆայել հրեշտակին։ Յերբ մեկի դեմ դատ են սկսելու, դիմիր Ռուբիկը հրեշտակին։ Ծանապարհ գնալիս հիշիր Ռուսալիքը հրեշտակին, քեզի գնալիս՝ Պահապարոնին...» և այլն։

Մենք չըերինք թվարկությունն ամբողջապես, բայց այսքանն ել բավական ե ցուց տալու համար, թե ի՞նչպես կրոնն աշխատում եր նախատեսնել ու տիրանալ մարդու անձնական կյանքի բոլոր բազմակողմանի լեռնությներին։

Եեկեղեցին իր «սրբերից» ամեն մեկին դարձրել եր միջնորդ աստծու առաջ մարդկալին առանձին կարիքների համար։ Աչքացավի համար պետք ե աղոթել Մինա, Լավրենտիա և Լոգինա նահատակներին (սըրբերին), ատամնացավի համար՝ Անտիպին, աղեթափության համար՝ Արտեմին, չըերության համար՝ Ռոմանին ու Իգնատիին, յերեխան ծաղկից աղատելու համար՝ Կոնոնին, ուսման ընդունակություն ձեռք բերելու համար՝ Կուզմալին ու Դեմյանին։ Անակնկալ մահվան դեմ, ինչպես հավատացնում եր յեկեղեցին, ոգնում ելին՝ ՍաղոՓը, Վառվառան ու Խառլամպեյը, հրդեհի դեմ՝ Նովգորոդցի Նիկիտը, անասունների սատկելու դեմ՝ Մողեստն ու Վլասը, իսկ ձիերին՝ Ֆլորն ու Լավրը... և այսպես անվերջ։ Մի խոսքով վոր կողմը դառնայիր, դեմդ կկանգներ մի հատուկ «սուրբ»։

Բանվորներին ու գյուղացիներին պահում ելին խավարի մեջ։ Նրանց համար դպրոցների փոխարեն ուժիղ թափով շինվում ելին յեկեղեցիներ։ Ամենորյա ժամասացություններին՝ իրիկնաժամին ու պատարա բագին հաճախելն համարվում եր պարտադիր։ Ամեն


տարի ապաշխարելը, խոստովանելն ու հաղորդվելն
ամեն մի հավատացլի կրանքում նշանավոր մոմենտ-
ներ ելին կազմում:

Ամեն տեսակի կապիտալիստական համայնք հիմ-
նված է տիրող դասերի ձեռքով բազմամիլիոն աշխա-
տավորների ճնշման վերա: Այդ ճնշման նպատակներին
և ծառայում կապիտալիստական իշխանության վողջ
կազմը: Զորք, վոստիկանություն, որենք, դատարան-
ներն իրենց կախաղաններով, բանտերով ու տաժանա-
կիր աշխատանքներով — այս բոլորը տրված են ի սպա-
տիրող դասերին՝ ամրապնդելու ու պահպանելու հա-
մար շահագործող կազմը:

Կապիտալիստական այդ կազմի հետ լիակատար
համերաշխությամբ գործում եր և կրոնը: Նա մուտք
գործեց բանակի մեջ, ուր զինվորների կրոնական շըշ-
մեցման համար գոյություն ուներ «զինվորական ու
ծովալին հոգեորականության» բազմաթիվ շտատ: Դա-
տարանում կրոնը յերդման միջոցով աջակցում եր
դասակարգային դատավարությանն ու հաճախ դուրս
եր տալիս խոստովանանքի մեջ լսած գաղտնիքները:

Կարելի է միանգամայն հաստատապես ասել, վոր
կրոնը հանդիսանում ե այն կրաշաղախը (ցեմենտ),
վոր պինդ միացնում ե դասակարգային շահագործող
պետության կառուցվածքի առանձին մասերը:

Անմտություն և սոցիալիստական համայնք կազ-
մակերպել, առանց ամենալարված պարքար մղելու
կրոնի դեմ: Զի կարելի տասնյակ միլիոնավոր բան-
վորներին ու գլուղացիներին թողնել կրոնի իշխանու-
թյան տակ: Զի կարելի թույլ տալ տերտերներին, վոր
շըշմեցնելով աշխատավորների գիտակցությունն, ան-



պետք դարձնեն նրանց նոր կլանքի կառուցման համար,
դասակարգակին պայքարի համար:

Ահա թե ինչու մենք պարտավոր ենք առանց
ձեռքերս ծալելու պայքար մղել կրոնի դեմ: Ահա թե
ինչու մենք պետք ե ոգնենք դեն շղթաել կրոնի
ստրկացնող լուծն իրենցից այն բանվորներին ու գլու-
ղացիներին, վորոնք դեռ հավատում են աստծուն:

ԴԵՊ ՊԱՅՔԱՐ ԿՐՈՆԻ ԴԵՄ

Իսկ թնչ ուղիներով պիտի ընթանա պայքարը
կրոնի դեմ:

Կրոնը կարողացել է մարդու վողջ կլանքը խճճել
իր մածուցիկ, թունավոր վոստայնով: Յեկ արդ վոս-
տայնը վերացնելու համար ահազին աշխատանք է
պետք: Պետք ե քայլ առ քայլ կործանել արդ սուս ու
պատիր հնձարքն աստծու մասին:

Մենք տեսանք, վոր կրոնի գլխավոր արմատը
թագնված է կապիտալիստական համայնքում գոյու-
թլուն ունեցող հասարակական փոխարարերութլուն-
ների հատկության մեջ: Իսկ արստեղից հասկանալի յե,
վոր հակակրոնական պայքարի ուղղությունը միան-
գամայն ու ամբողջապես զուգադիպում է կապիտա-
լիստական հասարակակարգը տապալելու համար բան-
վորների ու գյուղացիների մզած դասակարգային պայ-
քարին:

«... Կրոնի ճնշումը մարդկության վրա վճէ այլ
ինչ ե, յեթե վոչ համայնքի ներսում գոյություն ունե-
ցող տնտեսական ճնշման արդյունք ու արտացոլումն:
Վճէ մի տեսակի գրքուրկներով ու քարոզներով չի կա-
րելի լուսավորել պըռլետարիատին, յեթե նրան չլու-

սավորի նրա սեփական պալքարը կապիտալիզմի մութուժերի դեմք: (Լենին, «Սոցիալիզմ և կրոն» (1905թ.) Յերկ. ժողովածու VII հատ. մասն I, լեռես 49—50):

«Վայ մի լուսավորող գրքուկ չե վոչնչացնի կրոնը կապիտալիստական դժոխքում ընկճված, կապիտալիզմի կուլոր ու քալքալիչ ուժերից կախումն ունեցող մասսաների միջից, լեթե այդ մասսաներն իրենք չեն սովորի միացած, կազմակերպված, պլանորեն ու գիտակցորեն կռվել կրոնի այդ արմատի դեմ—կապիտալիզմի ամեն ձեվի ու տեսակի տիրապետության դեմ ...» (Լենին, «Բանվորական կուսակցության վերաբերմունքի մասին դեպ կրոնը» (1909թ.) Յերկ. ժողով. հատ XI, մասն I, լեռ. 253—254):

Այսպիսով դասակարգալին պալքարը կապիտալիստական պետության տապալման ու կապիտալիզմի մնացորդները վոչնչացնելու համար հակակրոնական պալքարի հիմնական ուղին և հանդիսանում:

12 տարի շարունակ Խորհրդային Միության բանվորներն ու գլուղացիները հաջողությամբ տանում են սոցիալիստական շինարարությունը: Սակայն մենք տեսնում ենք, վոր կրոնը դեռ կենդանի լե և մինչեւ անդամ փորձում ե դիմադրել սոցիալիստական հարձակմանը:

Կրոնական ու աղանդավորական կազմակերպությունների գործունելության աշխուժացումը նկատվում և հատկապես այժմ—դասակարգալին այս ամենասըլքված մոմենտին: Դասակարգալին պալքարի որումը հետևանք է զարգացող սոցիալիստական արշավի՝ ընդդեմ լերկրի կապիտալիստական ելեմենտների: Ի զուրչ չե, վոր հենց այժմ հուզվեցին ու շարժվեցին տմեն

գուլնի յեկեղեցականները—նրանք լավ զգում են, վոր մոտեցել ե իրենց վախճանը:

Այդ արշավս ավելի պինդ ե սեղմում ողակը դասակարգալին թշնամու վզին: Այդ պատճառով ել անխուսափելի կորստան դատապարտված նեպմանի ու կուլակի մերձիմահվան ընդդիմությունն ավելի խիստ ու հուսահատական ե դառնում:

Ինչով ե հայտնաբերվում այդ ընդդիմությունը: Առաջին՝ նրանով, վոր փորձեր են անում խանգարել այնպիսի լուրջ ձեռնարկներ, ինչպիսիք են հացամթերումը, ցանքսի կամպանիաները: Ցերկորոդ՝ հայտնապես ֆլասատու, հանցավոր աշխատանքով: Ցերորոդ՝ և այդ պետք ե առանձնապես ընդգծել այստեղ—դասակարգալին թշնամու ընդդիմությունն արտահայտվում ե յեկեղեցական ու աղանդավորական կազմակերպությունների գործունելության հենց աշխուժացումով: Դասակարգալին թշնամին ներկալիս զրկված ե իր բանակից, իր վոստիկանությունից, իր դատարանից: Այս բոլորը խլեց նրանից Հոկտեմբերյան հեղափոխությունը: Միակ թուլատրված կազմակերպությունը, վորը համապատասխանում ե նրա վոգուն,— դա յեկեղեցին ե կամ վորեւ կրօնական աղանդ: Ցեղ դրանց ոգնությամբ ե, վոր նեպմանն ու կուլակը փորձում են կատաղի ընդդիմադրություն ցույց տալ սոցիալիստական շինարարության:

Հասկանալի լի, վոր յեթե ալժմյան կրօնական խոշոր կազմակերպությունները բաղկացած լինելին մեր դասակարգալին թշնամիներից, ապա դժվար չեր լինի ճնշել նրանց ընդդիմությունը: Խնդիրն զւալի կերպով բարդանում ե նրանով: Վոր յեկեղեցական ու աղան-

դավորական կաղմակերպությունների մեջ գտնվում են և թուլլ են տալիս իրենց խաբելու միլիոնավոր աշխատավորներ։ Ալդ հանգանանքն հարկադրում ե մեղ, վոր կարողանանք լիտամնաց հավատացլալ բանվորների և գլուղացիների աչքերը բանալ ու ցուց տալ նրանց կրոնի իսկական նշանակությունը։

Իսկ ինչով բացատրել բանվորներից ու գլուղացիներից գոմանց կրօնասիրությունը մեր պայմաններում։ Զնայելով դեռ 1917 թվի Հոկտեմբերին դասակարգակին թշնամու դեմ տարած մեր հաղթանակին, ինչու նրանք դեռ շարունակում են հավատալ աստծու։

Այս հարցի պատճենանը մենք գտնում ենք գլուղացիական տնտեսության դեռ գլուղացիուն ունեցող ձևերի մեջ։ Գլուղացին մեծ մասամբ դեռ ապրում ե փոշիացած, կտրտված, մանր սեփականատիրական տնտեսությամբ։ Կոլեկտիվից դուրս մնացած անհատ գլուղացու համար դժվար ե իր տնտեսության մեջ մտցնել նոր, կատարելագործված ձևեր, վորի հետեւանքով նա ցածր բերք ե ստանում ու վատ արդյունք։

Այս բանը գլուղացու մեջ ծնեցնում ե անվստահություն դեպ հողի վրա զործ դրած իր աշխատանքի արդյունքը, յերկյուղ դեպ սպասվելիք բերքը։ Հենց այդ բնությունից կախում ունենալն ել անհատ-գլուղացուն զարձնում ե կրօնասեր։ Նրան, ինչպես և հին վայրենուն, թվում ե, թե բնության յերեսույթները դեկավարվում են ինչ-վոր խորհրդավոր «աստվածային կամքով»։

Աշխատավորները դեռ բոլորը չեն յուրացրել Հոկտեմբեմբերյան մեծ հեղաշրջման նշանակությունը, դասակարգութեն դեռ բոլորը չեն հասել գիտակցության։

Նրանցից վոմանց համար հեղափոխությունը մի անսպասելի յերևույթ եր, վոր խանգարեց իրենց կյանքի սովորական ընթացքը, Գլուխները կորցրին նրանք ու այդ շփոթության մեջ կպան աստծու փեշից:

Մասնավորապես պետք ե նշել, վոր մեր որերում կը ուն առանձնապես պինդ պահվում ե կանանց մեջ։ Սա բացատրվում ե նրանով, վոր մեծ մասամբ կինն ամբողջապես զբաղված ե հոգսերով լի տնային տնտեսությամբ ու միանգամայն հեռու լե մնում սոցիալիստական շինարարությունից։ Իսկ մենք գիտենք, վոր ինչքան մարդ հեռու լե հասարակական կյանքից, այնքան նա անգիտակից ե ու այնքան խիստ նրա վրա կը ունի իշխանության ճնշումը։

Գյուղից լեկած բանվորների լետանաց խմբերը, դեռ չդաստիարակված սոցիալիստական դործարանում, կարող են կը ունի փեշից բռնել, կարող են չհավատալ բանվորական դասի ուժերին ու նահանջել դժվարությունների առաջ։

Իսկ դրանից ոգտվում ե դասակարգային թշնամին՝ կուլակը, նեպմանը, տերտերն ու աղանդավորը, վոր տքնում են աշխատավորներին քաշել իրենց կը ունական կազմակերպությունների մեջ ու ոգտվում են լետանաց մարդկանց տգիտությունից իրենց դասակարգային նպատակներին հասնելու համար։

Ժամանակակից կը ունասիրության այս բոլոր պատճառները մի ավելորդ անգամ ևս ցուց են տալիս, վոր հակակը ունական պայքարի հիմնական հունն հանդիսանում ե բանվորների ու գյուղացիների դասակարգային գիտակցության ամրապնդումն ու սոցիալիզմի հաջող կառուցումը։ Հակակը ունական աշխատանքի

այս գլխավոր ուղղութիւն պետք է հպատակվեն աստծու դեմ մղվող պալքարի բոլոր առանձնակի միջոցները:

ԴՊՐՈՑԸ ԳԵՏՔ Ե ՆՎԱՃԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԿՐՈՆԻ ՃԻՐԱՆՆԵՐԻՑ

Առաջին գիտելիքներն աշխարհի ու կյանքի մասին մարդ ստանում ե մանուկ հասակում դպրոցում։ Կրոնը միշտ ամուր կպել ե դպրոցին, թուլլ չտալով, վոր մատաղ սերնդի կրթությունն անկրոն լինի, ծարական մուսաստանում յեկեղեցին իր ձեռքի տակ ուներ 40 հազար տարրական (այսպես կոչված «յեկեղեցական ծխական») դպրոցներ 2 միլիոն ուսանողությամբ։ Բոլոր դպրոցական հիմնարկներում, սկսած ամենաստորին դպրոցից մինչև բարձր մասնագիտական դպրոցն, անընդհատ ավանդում ելին «կրոն»։ Կրոնական պաշտոնյաների մի ամբողջ բանակ,—գյուղական «տերհայրներից» սկսած մինչև աստվածաբանության ամենակատարելազործված պրոֆեսորները,—տառացի կերպով տիրապետել ելին դպրոցական բոլոր հիմնարկներին, մինչ-հեղափոխական մուսաստանի ժողովրդական լուսավորության ամբողջ գործին։

Այժմ ել կապիտալիստական պետություններում յեկեղեցին կատաղի կորիվ ե մղում մատաղ սերնդի վրա իր աղղեցությունն ունենալու համար։

Ամեն մի կապիտալիստական յերկրում մենք տեսնում ենք, վոր մատաղ սերնդի կրոնական կրթությունն ու դաստիարակությունը դրված ե շատ լայն ու հաստատուն։ Բոլոր կրոնների տերտերներն համառ կերպով ձգտում են, վորպեսզի մատաղ սերնդի դաստիարակությունն ամբողջապես վերցնեն իրենց ձեռ-

Քը! Այս տեսակետից Ավստրիան հանդիսանում է մի համոզիչ որինակ:

Ավստրիական կառավարությունն իրեն ցուցադրեց իրեւ առանձնապես անողոք հակառակորդ ու խեղղող հեղափոխական շարժումը: Խսկ ավստրիական կառավարության զլուխ կարդինալ¹ Զելպելը հայտարարեց:

«Միայն դպրոցի միջոցով կարելի յե ժողովրդի հոգին ազատել կոմունիստական թույնից և ամուլ պատնեշ կառուցել սոցիալիզմի հարձակման դեմ»:

Այսպիսով ավստրիական յեկեղեցականն հրաշալի կերպով հաշվի յե առել դպրոցի մեծ նշանակությունը մատաղ սերնդի դասակարգային դաստիարակության գործում: Ահա մի ուրիշ որինակ. արտասահմանյան բուրժուազիան, վոր ատելով տառմ ե խորհրդային պրոլետարական պետությունը, կատաղած ե մասամբ և նրա համար, վոր մեր դպրոցներից վտարված ե «կրոնի» դասավանդությունը: Մոտ ժամանակներս, որինակ, Անգլիայում տեղի ունեցավ մի մեծ միտինգ, վոր նվիրված եր խորհրդային դպրոցներում կրոնի դասավանդումն արգելված լինելու խնդրին: Միտինգին մասնակցում ելին անգլիական յեկեղեցու բարձր պաշտոնյաները, նույնպես և ԽՍՀՄ-ի ամենակատաղի թշնամիներն, ինչպես՝ անգլիական ներքին գործերի նախկին մինիստր Խիկսը (վոր իր ժամանակին կաղմակերպեց բանդիտային հարձակում խորհրդային հիմնարկների վրա Անգլիայում, վորից հետո Անգլիայի և ԽՍՀՄ-ի մեջ խզվեցին դիպլոմատիական հարաբերությունները, վոր վերջերս միայն վերականգնեցին): Այդ միտինգին դուրս յեկած հրեյական գլխավոր բավ-

¹Կարդինալ—կաթոլիկ եկեղեցու ամենաբարձր յեկեղեցական առաջնան է:

վինը կոչ ե անում անգլիական կառավարությանը՝
«պահանջել» խորհրդալին իշխանությունից խորհրդա-
լին դպրոցներում մտցնել «կրոնի» դասավանդումը։
Այս որինակը ցույց ե տալիս, թե մւմն ե պետք, մւմն
և ձեռնտու մանուկներին կրոն ավանդելը։

Բերված փաստերը խոսում են այն մասին, թե վճր-
քան անհրաժեշտ ե մեզ խորհրդալին դպրոցը դարձնել
հուսալի հենակետ կրոնի դեմ մղվող պայքարի։ Սա-
կայն կան մարդիկ, վոր կարծում են, թե խորհրդալին
դպրոցը դուրս պիտի մնա հակակրոնական պայքարից։
Ուզբեկ ե արդյոք այս կարծիքը։

Այս հարցին պատասխանելու համար պետք ե միայն
ուշադիր մտածել այն շրջապատի մասին, վորի մեջ
ապրում ե մեր մատաղ սերունդը։

Մանուկը դեռ մինչև դպրոց մտնելն, ընտանիքում
արդեն ներշնչում ե կրոնական վորոշ տրամադրու-
թյուններ։ Միլիոնավոր յետամաց բանվորներ ու
գլուղացիներ, իրենք շարունակելով դեռ հավատալ
աստծու, իրենց մանուկներին ևս դեռ շատ մատաղ
հասակից ներշնչում են այդ հավատը։ Մինչև դպրոց
մտնելը գրեթե բոլոր մանուկներն արդեն մկրտված
են լինում ու կրոնական վորեւ անուն ստացած։ Մի
շարք տարիների ընթացքում ընտանիքում կատար-
վում են մանկան «անվանակոչությունը», նրան տա-
նում են յեկեղեցի, բացատրում, գլուխը մտցնում, թե
նա ունի «պահապան հրեշտակ», վորին չի կարելի
վիրավորել և վորը պահանջում ե, վոր մանուկն իրեն
պահի կրոնական պահանջների համապատասխատն։
Այսպիսով մանկան հենց վարք ու բարքն արդեն շատ
թե քիչ յենթարկվում ե կրոնական կանոններին։

Կրոնական մեծ տոններին մանկանն ընծալում են նոր շոր կամ խաղալիք: «Մաղկաղարդին» ծառ են տալիս ձեռը: Զատկին մանուկը տեսնում ե անսովոր սարքած սեղան հատուկ կրոնական կերակուրներով: Քիչ մանուկներ կան, վորոնց չեն սովորեցնում ծննդին և ավետիս» ման գալ: Բնական ե, վոր մանկան մատադ գիտակցության մեջ այս բոլոր անսովոր, հետաքրքիր, շատ անգամ ուրախառիթ ապրումներն արդեն գունավորվում են կրոնական գույնով: Մալրիկները, տատիկներն ու հորաքուրները մինչ այդ կարողանում են արդեն մանկան գլխում մտցնել Շղբախտի ու դժոխքի հեքիաթները:

Հաճախ կրոնական այսպիսի պաշարով մանուկն ընկնում ե դպրոց: Բայց դպրոց մտնելը դեռ բնավ չի նշանակում, թե մանուկն ազատվեց կրոնամոլ ընտանիքի ազդեցությունից: Ընդհակառակն, ընտանիքը շարունակում ե մանկան կրոնական դաստիարակությունը, վորն այնքան հաջող ե ընթանում, վորքան անտարբեր ե պահում իրան դպրոցն այդ խնդրում:

Խորհրդային մի քանի դպրոցների քննությունը ցուց տվեց, վոր ծնողները վոչ միայն ստիպում են մանուկներին հավատալ աստծու ու կատարել կրոնական ծեսերը, այլ և խիստ հետեւում են նրանց ու անհնաղանդության դեպքում պատժում, թողնելով անձագ:

Մի աշակերտ, յերբ հարցըրին, թե հավատիւմ ե աստծու, թե վոչ,—պատասխանեց.

— Մայրս ստիպում ե աղոթել, թե չե, ասում ե՝ այն աշխարհում քեզ յեռացըրած թափալի մեջ կտապակեն:

Ցեվ այս պատասխանն յեզակի չե:

Մոսկվայում դեպք ե լեղել, լերը աշակերտների ծնող-ները խոսք մեկ արած մի կույս են վարձել, վոր ի-րենց լերեխաներին «կըոն» սովորեցնի:

Մոսկվայի լոթնամլա դպրոցներից մի քանիսի քըն-նությունը պարզեց, վոր հասակավոր աշակերտներից $40^{\circ}/_0$ ը, իսկ մի դպրոցում նույնիսկ $92^{\circ}/_0$ ը հավա-տում են աստծու:

Այս բոլորից հետո միթե դպրոցը կարող ե մեկուսի մնալ հակակրոնական պարգարից:

Մանուկը միշտ դպրոցի պատերի մեջ չի մնում: Ա-զատ միջոցին նա կարող ե մտնել տաճար, սինագո-գա, ազոթատուն, տեսնել շքեղ ու հանդիսավոր ժա-մասացություն, լսել կրոնական քարոզ: Արդ, հարց ե ծագում, վժրտեղից դպրոցական սանը հակաթուն պի-տի ստանա կրոնական ալդ տպավորությունների դեմ: Պարզ ե. դպրոցը չի կարող և չզետք ե անտար-բեր հանդիսատես մնա, թե ինչպես կրոնը պատրաստ ե վերցնել և տեղ-տեղ նույն իսկ վերցրել ե արդեն մատադ սերունդն իր ճիրանների մեջ:

Զի կարելի մտքահան անել, վոր քանի հարձակումն ակտիվ ե դառնում դասակարգային թշնամու դեմ, այնքան ել նա խստացնում, ե ընդդիմությունն, և ալդ դիմադրության հուսալի ե փորձված միջոցներից մեկը՝ կրոնն ե: Յեկ նա պինդ կպչում ե հատկապես մատադ սերնդին, աշխատելով լենթարկել նրան, իր աղքե-ցությանը: Զանազան դավանություններ ու աղանդ-ներ կազմակերպում են լերիտասարդների առանձին կրոնական միություններ, վորոնց մեջ ուժեղ թափով դրավում են աշխատավորների մանուկներին: «Քրիս-տերիտ», «Բապտերիտ» (բապտիստների լերիտասար-

դական միություն) «Միններիտ» միություն (Մեննոնիտական լեռիտասարդական միություն) —և կրօնական բոլոր այս միությունները տանում են ամենահամառ ու տենդոտ աշխատանք, ներգրավելով իրենց շարքերը բանվորա-գլուղացիական լեռիտասարդության լեռամնաց մասը։ Յեկեղեցականները նույնիսկ բանն այնտեղ են հասցըել, վոր Մոսկվայում, որինակ, մանուկներին լեկեղեցի գրավելու համար մի տերտեր շաքար-հաց (որյանկան) ու կանֆետներ եր բաժանում նրանց։

Տ' ուղերների մանուկ սերնդին տիրանալու ձգտումն աներեսության և համարում։ 1928 թվին Ռուկրայինալի լեկեղեցական ժողովը վարոշեց խնդրել խորհրդալիին իշխանության, վոր թույլ տա դպրոցներում։ մտցնել «կրոնի» դասավանդումն։ Այսպես, չըավականանալով ընդհատակայա աշխատանքով, տերտերները փորձում են որինական ճանապարհով տիրանալ խորհրդալին դպրոցին։ Վոմանց լենթադրությունը, թե դպրոցը կարող ե մեկուսի մնալ կրոնական պալքարից, միանգամայն սխալ ե ու վնասակար։

«Աղոթելով —գրքերդ առեք, մանուկներ» — քաղցրու-մեղձ ասում եր ցարական դպրոցը։

«Կորչեն ըոլոր աստվածները» պետք ե ասի իր սաներին խորհրդալին դպրոցը։

Դպրոցը — դասակարգալին պալքարի մեծ զենք և Դասակարգալին պալքարը տարվում ե սոցիալիստական շինարարության ամբողջ ֆրոնտով, բաց չթողնելով կյանքի և վոչ մի անկյուն։ Դպրոցը չի կարող մեկուսի մնալ այդ պայմանից։ Կրոնն ու գիտությունը անհաշտ թշնամիներ են։ Այդ պատճառով ել խորհըրդալին դցրոցը չի կարող անտարբեր ու անդործ մնալ։

դաստկարգալին ճնշման այնպիսի մի զորավոր միջոցի հանդեսը, ինչպիսին կրոնն եւ Անկրոն դպրոցը դադարում եւ դասակարգալին դպրոց լինելուց։ Մեր դրադոցը պետք է լինի հակակրօնական։

ԿՐՈՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆ Ե

Կուլտուրական շինարարությունը մեր լեռկրում սոցիալիստական շինարարության անբաժան մի մասն եւ Կուլտուրական հեղափոխության շրջանը շատ ընդարձակ եւ նա պարփակում եր մեջ և՛ գիտություն, և՛ արվեստ, մասնավորապես՝ գրականություն, թատրոն, լեռաժշտություն։ Հարց եւ ծագում՝ կարմղ են կուլտուրական հեղափոխության այս զենքերը մեկուսի մնալ հակակրոնական ռազմիկ պալքարից։

Իհարկե, վհչ, Կուլտուրական հեղափոխությունն առանց ամենավճռական պալքարի աստծու դեմ, միտք չունի միանգամայն։ Գիտությունն ու արվեստը վհչ միայն անկրոն պիտի լինեն, այլ և պարզ, վորոշ ու բացահայտ հակակրօն։

Մեր գիտությունն իր բազմաթիվ գյուտերով ահագին ծառայություններ եւ մատուցում սոցիալիստական շինարարության և հենց դրանով ել ամենաուժեղ մարտնչող եւ հանդիսանում կրոնի դեմ։ Բայց գիտությունն առանց սահմանափակվելու սոսկ իր մասնակցությամբ միայն սոցիալիզմի տնտեսական շինարարությանը, պետք եւ և անմիջապես պալքարի առ աստված գոյություն ունեցող հավատի դեմ։

Գիտությունն ու կրոնը—դոքա վաղուցվան վոխերիմ թշնամիներ են։ Հարկուրավոր տարիներով պայ-

քարում են դոքա իրար դեմ աշխատավորության գիտակցությանը տիրանալու համար:

Տերտերների սիրած զրուցները, թե գիտությունը չի հակասում կրոնի վարդապետության, վոր նոքամիատեսակ, մինչև իսկ համերաշխ գործում են հոգուտ մարդկանց—անպայման սուտ են, կեղծիք են: Այդ պնդումները վկայում են միայն այն մասին, վոր հիրավի կրոնական պաշտոնաւներն ու բուրժուական գիտնականները հաճախ կարողանում են համաձայնության գալ իրար մեջ, աշխատավորներին միահամուռ հիմարացնելու ու փոխադարձաբար դասակարգալին ճնշմանը նպաստելու համար:

Իսկական, շահագործողների առաջ չքծնող գիտությունը լերբեք չի կարող կրոնի հետ դաշնակից լինել: Ընդհակառակը, նա կրոնի կատաղի թշնամին եւ այլ կերպ չի լել կարող լինել:

Կրոնը սովորեցնում է, թե աշխարհում ամեն ինչ կատարվում է աստծու կամքով, վոր աստված ամենակարող եւ կարող ե կյանքի որենքները փոխել այնպես, ինչպես իրեն հաճելի լի: Այստեղ ե հանգում և կրոնական վողջ ուսմունքը հրաշքների մասին: Մարդկային կամքն անզոր ե կանգնեցնել արեին լերկնքի վրա,—ասում ե կրոնը, բայց աստված Հեսու Նավիայի աղոթքով կանգնեցրեց արեին: Կրոնը պատմում է, թե ինչպես աստված հրամայեց ջրին, վոր բաժանվի լերկու մասի ու ծովի հատակով ճանապարհ տա հըրաներին, վոր փախչում ելին իրենց հետապնդող լեզիպատական զորքերից ազատվելու համար: Ապա ջուրը նորից միացավ ու խեղղեց լեզիպատացիներին: Նման անհեթեթ պատմվածքներով կրոնն աշխատում եր ներ-

շնչել հավատացրաներին աստծու ամենակարողության
ու մարդկանց վոչնչության գաղափարը։ Կրոնին պետք
եր այս նրա համար, վորպեսզի աշխատավորներին
դաստիարակի, սովորեցնի ստրկական հնագանդությունն
«ամենակարող» աստծու առաջ, վորի անունով ամրա-
պնդվում եր հասարակական հարաբերությունների դա-
սակարգային շահագործող կազմը։

Իսկական գիտությունը միշտ կռվել ե կրոնական
վարդապետությունների դեմ։ Դիտությունն իրեն նը-
պատակ ե զնում գտնել կյանքի բոլոր լերեռութների
ամենագաղտնի պատճառներն ու որենքները, բանալ
ընության բոլոր գաղտնիքներն ու ապացուցել մարդ-
կանց, վոր աշխարհում ամեն ինչ կատարվում ե վոչ
թե աստծու կամքով, այլ հաստատուն, ճշգրիտ ու
խիստ վորոշ որենքների համաձայն։

Կրոնը ձգտում ե մթագնել, ուժասպառ անել մարդ-
կանց միտքը, մինչդեռ գիտությունն ընդհակառակը՝
նպատակ ե դրել լուսավորել մարդկանց, դարձնել
նրանց լիակատար տեր կյանքին ու կյանքը կառուցող։

Յերբ առաջին անգամ լերկաթուղի ելին անցկաց-
նում մեղանում, զյուղացիք «սուրբ պատկերները»
(ИКОНА) ձեռներին կանգնում ելին լերկաթզծի վրա,
վորպեսզի քշեն «անմաքուր վոգուն», վորը, նրանց
կարծիքով, նստած ե շոքեկառքի մեջ ու շարժում ե
գնացքը։ Այդ «սուրբ պատկերներով» կրոնն աշխա-
տում ե գիմաղրել գիտության ուժին, վոր կարողացել
ե գտնել տեղափոխության ու հաղորդակցության մի-
ջոցներ։

Դեռ շատ վաղ գիտնականները, կամենալով լիապես
ուսումնասիրել մարդկային մարմնի կազմվածքը, վոր-

պեսզի ճիշտ վորոշեն հիվանդություններն ու բժշկեն
ալն, անդամահատում ելին մարդկանց ու կենդանինե-
րի դիակները։ Մահանա (պատճառ) բռնելով այս,
կրոնը կատաղի կոիվ եր մղում գիտության ղեմ։ Նա
դիահատումը մտնացու մեղք հայտարարեց, իսկ իրենց՝
գիտնականներին սպառնաց խարուկավով։ Ձեռնտու չեր
կրոնին թուլ տալ, վոր գիտությունն իմանա հիվան-
դությունների պատճառներն ու գտնելով նրանց բժշ-
կության ճիշտ միջոցները, աշխատավորներին յետ
կանգնեցնի բժշկության համար անոգուտ տեղն աղո-
թելուց։ Կրոնը վախենում եր, թե մարդիկ կդադարեն
ուխտ գնալուց, «սրբերին» դիմելուց ու հավատալուց,
թե միայն աստված կարող է ոգնել հիվանդ մարդուն։

Հարյուր հիսուն տարի առաջ կրոնն իր հետևորդ
եղուարդ Մոսսելի բերանով ծաղկի պատվաստումն
հայտարարեց «վտանգավոր ու մեղսալի»։ Կրոնը հա-
վատացնում եր, թե հիվանդություններն աստված և
տալիս մարդկանց, իբրև պատիժ նրանց մեղքերի և,
վոր աստծու ուղարկած այդ պատիժ մարդկանց պաշտ-
պանելը «սատանալի ներշնչումն» եւ։

Այսպես եր դիմադրում կրոնն իսկական գիտության
հառաջադիմությանը։

Բազմաթիվ գիտնականների կրոնը կորստան ե
մատնել նրա համար, վոր նրանց գիտական յեղա-
կացությունները հակասել են կրոնի ուսմունքին ու
սպառնացել մերկացնել այն խարելությունը, վորով
ոգտվում ե հոգեսորականությունն աշխատավորներին
իրեն ու իր տեր-կապիտալիստներին յենթարկելու հա-
մար։ Հոչակավոր գիտնական Գալիլեյն ուսուցանում
եր, թե յերկիրը պատվում է իր առանցքի շուրջը, իսկ

կրոնն ասում եր, վոր լերկիրն անշարժ եւ Գալիլեյին
լեկեղեցական դատի լենթարկեցին հերետիկոսական
վարդապետության պատկանելուն համար Նրան ըանտ
գյեցին ու մահվամբ սպառնացին, Ալսպիսի որինակ-
ներ - դիտության կրոնից կրած հալածանքների, կարե-
լի լի ըերել վորքան կամենաք:

Ալսպիսով մենք տեսնում ենք, վոր կրոնի ու գի-
տության մեջ հաշությունն անհնարին եւ Գիտու-
թյունը, լեթե չի կամենում բուրժուաների ձեռին ծա-
ռայել իրեւ ճնշման գործիք, չի կարող համբերատար
լինել դեպ կրոնը: Նա անխուսափելիորեն պետք ե
դուրս գա հրապարակ իրեւ գիտակից հակակրոնական
մարտիկ, մանավանդ վոր կրոնը մինչ ցարդ արգելք
և հանդիսանում գիտական ուսմունքների տարածվե-
լուն: Ի հաստատություն սրան մի քանի որինակներ
բերենք ամենավերջին ժամանակներից:

Բոստոնի (Ամերիկա) համալսարանի պատմագիտա-
կան բաժինը բացարձակ հալտարարում ե, վոր Նրա
նպատակն և «վհչ ալնքան պատմական գիտություն
տալ, վորքան ցուց տալ աստծու մատը ժողովուրդ-
ների ու մարդկանց գործերում»:

Այսպիսով կրոնը կարողացել է հիմնապես լենթար-
կել իրեն ամերիկական բուրժուական գիտությունը:
Բայց այդպիսի գիտությունն արդեն կեղծ գիտություն
եւ նա կարեռ ե կրոնին, վորպեսզի նրա աջակցու-
թյամբ ամրապնդի դասակարգալին ճնշման կազմն ու
արդարացնի այն աստծու անունով, սակայն նա բնավ
չի հանդիսանում իրեւ գիտություն ու մարդկային
միտքն առաջ մղող միջոց:

Պակաս պերճախոս չի և հետևալ որինակը.

Անցյալ գարում անգլիական լեպիսկոպոս Վիլպեր-

ֆորսը բանադրանքի լենթարկեց մեծ գիտնական Դարվինին այն հիման վրա, վոր նրա ուսմունքը (բնական ընտրության) «անհամապատասխան և աստուծո խոսքին»: Իսկ վերջին ժամանակներս, արդեն մեր որերում, վողջ աշխարհը դղբդաց Ամերիկայի ալսպես կոչված «կապկալին պլրոցես»-ից, վոր կապված եր նույն Դարվինի անվան հետ: Դպրոցական մի ուսուցիչ աշակերտներին մարդու ծագումը բացատրելիս, հետեւելով Դարվինի ուսմունքին, ասել եր, վոր մարդը ծագել և կապկից: Կրոնի դեմ այդպիսի «սրբապղծություն» թույլ տալու համար ուսուցչին լենթարկեցին դատի:

Կրոնն ուսուցանում ե, թե աշխարհն ստեղծել և աստված: Իսկ գիտական ուսումնասիրություններն ասում են, վոր աշխարհն ու նրա միջի բոլոր գոյություններն առաջ են յեկել ու զարդացել առանձին որենքների համաձայն և իհարկե առանց վորեն «աստծու» մասնակցության: Աշխարհի ստեղծագործության մասին նորագույն ուսմունքներից մեկն հանդիսանում ե «կվանտ»-ների¹ ուսմունքը: Այդ կվանտների հատկություններն ու բնույթը պարզելու համար աշխատում են այժմ ժամանակակից գիտնականները: Յեվահա վորպեսզի մթագնեն ու խճճեն կրոնի համար այդ սպառնալից գիտական հայտնագործումը, կաթոլիկական յեկեղեցու պետ Հռովմի պապը դիմել և աշխարհի բուրժուական գիտնականներին, առաջարկելով գըրել մի այնպիսի շարադրություն, վոր ապացուցի կվանտի «աստվածալիին ծագումը»: Յեվահապիսի շարադրության համար պապը նշանակել ե խոշոր գրա-

¹ Կվանտներ—եներգիայի մանրագույն մասնիկներն են, վորոնց շնորհիվ շարժվում և աշխարհում ամեն ինչ:

հական հատուցում։ Նման առաջարկություն պապը չեր քաշվել ուղարկել և ԽՍՀՄ-ի ելեքարոֆիզիկական ինստիտուտի ակադեմիկ Իլոֆելին։

Կաթոլիկական յեկեղեցին ինկատի ունի կաշառել վորեն շառլատանի կամ բուրժուական գիտնականի, վորը փողի համար կհամաձայնի ոգնել իրեն (յեկեղեցուն) խարելու աշխատավորներին։

Բերենք մի որինակ ես։

Հայտնի գիտնական պրոֆեսոր Վորոնովի մոտ ժամանակներիս Անգլիա ժամանելը մեծ իրարանցում գցեց անգլիական բուրժուազիայի առաջնորդների մեջ։ Պրոֆեսոր Վորոնովը փորձեր և անում մարդկանց յերիտասարդացնելու Մինչև այժմ կրոնն ուսուցանում եր, թե յերկարակեցությունն աստվածային հատուկ պարգև ե «արդարա-ներին, նրանց առաքինությունների համար։ Մինչդեռ պրոֆեսոր Վորոնովի փորձերը ցույց ելին տալիս, վոր առանց վորեն աստծու, գիտության ուժով միայն կարելի յերկարացնել մարդու կլանքը։ Հավատը առ աստված դարձլալ տապալված դուրս յեկալ։ Հասկանալի յե, վոր բուրժուազիան չեր կարող անտարեր լինել դեպի մի գիտնական, վորի գործունելությունը մերկացնում եր կրոնի խարերայությունը։ Անգլիական բուրժուազիայի պետերն առաջադրեցին ներքին գործերի մինիստրին, վոր անհրաժեշտ և արգելել պրոֆեսոր Վորոնովի ոպերացիաներն, իբրև Շնակասող սրբազան գրքին։ Ինքնին հարց և ծագում, թե ինչնվագ և տարբերվում այժմլան անգլիական բուրժուազիան ծաղկի պատվաստման դեմ բողոքողներից, վորոնց մասին հիշեցինք վերեռում։ Մրանք ել, նրանք ել հալածելով գիտությունը, ծածկվում են կրոնի քղանցքի տակ։

Ալսպիսով ամեն տեղ ու ամեն ժամանակ կրոնը լեռնել և ու այժմ ել շարունակում ե լինել իսկական գիտության վոխերիմ թշնամի:

Իր հետագա զարգացման հաջողության տեսակետից գիտությունը պետք ե վերջնականապես վոչնչացնի իր ալդ վոխերիմ հակառակորդին՝ կրոնին:

Գիտությունը չի կարող անկրոն լինել: Նա պետք ե դառնա հակառակոնական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ ՊԻՏԻ ՊԱՅՔԱՐԵՆ ԿՐՈՆԻ ԴԵՄ

Մեզ մնում ե քննել արվեստի ու գեղարվեստական գրականության վերաբերմունքը դեպ կրոնն ու վորոշել, թե կարմղ են դոքա, կուլտուրական հեղափոխության պայմաններում, լինել մեն-միայն անկրոն, այսինքն չդնեն իրենց նպատակ պայքտրել առ աստված գոյություն ունեցող հավատի դեմ:

Այն բոլորից հետո, ինչ մենք ասեցինք կրոնի դեմ յարված ու գործունյա պայքարի անհրաժեշտության մասին, հասկանալի լին, վոր ինչքան բազմաթիվ ու բազմատեսակ լինեն ալդ պայքարի միջոցներն, այնքան արագ կտարվի հաղթանակը կրոնի դեմ:

Արվեստն ու դիտությունն ահազին ազդեցություն ունեն մարդկանց վրա: Կարդացված գիրքը, թատրոնում դիտվող պիեսան, լսված լերաժշտությունը, նկարչի նկարը—ընթերցողի, դիտողի ու լսողի մեջ առաջ են բերում, զարթեցնում ու ամրապնդում նրանց մեջ վորոշ ապրումներ ու տրամադրություններ: Իսկ ստացված տպավորություններն իրենց հերթին ազդում են մարդկանց արարմունքների վրա, ուղղելով նրանց համապատասխան այն խնդիրների, վոր իրենց նպատակ

Ան դըել գըողը, նկարիչը, լերաժիշտը։ Արվեստի արագությունն ազդում է մարդկանց վրա լերկու ուղղությամբ։ Կամ ներշնչում է նրան իր սեփական անձի վոչնչությունն, անդորությունն ու պայքարի տնընդունակությունը, կամ ընդհակառակը՝ աջակցում ու զարթեցնում է նրա մեջ արիություն, ծնեցնում վըրդովմունքի, բողոքի զգացմունք ու կանչում պայքարի ավելի լավ կլանքի համար։

Իեվ Տոլստոյն, որինակ, մի պատմվածք ունի՝ «Աստված ճշմարտությունը տեսնում է, բայց շուտ չի ասում»։

Ինչպես ցուց ե տալիս պատմվածքի հենց վերնագիրը, Տոլստոյն ուզում է ներշնչել ընթերցողին, թե մարդու բախտը կախված է «աստծուց», վորը կարող է ուղարկել մարդկանց ծանր ու լերկացատև փորձություններ ու վերացնել այն, լերը ինքը կամենա։ Իսկ մարդը պետք է համբերությամբ ու անտրտունջ տանի արդ փորձություններն, ապավինելով «աստծու արդարադատությանը», վորը վաղ թե ուշ կհաղթանակի։

Վերցնենք մի ուրիշ գրական վաստակ—թեկուզ հենց որինակ գրող Սալտիկովի պատմվածքը գլուղացու և լերկու գեներալների մասին։

Այդ գրվածքում հեղինակը պատմում է, թե ինչպես լերկու պորտաբույծ գեներալներ ընկնում են մի անապատ տեղ։ Վոչ մի գործ անել չելին կարող նրանք ու սովից կմեռնելին, լեթե չպատահեր մի գլուղացի։ Դեներալներն ստիպում են գլուղացուն աշխատել իրենց համար ու գլուղացու աշխատանքով ազատվում են կորստից։

Այս լերկու գրական լերկերն համեմատելով, մենք տեսնում ենք, թե վրքան տարբեր ե դոցա ազդեցությունն ընթերցողի վրա։

Տոլստոյի պատմվածքը նիշնչում և ընթերցողին հնազանդություն ու համբերանք, ինչ վոր սովորեցնում և կրոնը:

Միտնգամայն տարբեր բնույթ և կրում Սալտիկովի պատմությունը: Նա ցուց ե տալիս ընթերցողին, վորդասակարգային թշնամին (գեներալները) ապրում և աշխատավորի հաշվին (գյուղացու աշխատանքով) և վոր գեներալների բարեկեցությունը վոչ թե աստծու կամքով ե ձեռք բերվում, այլ գյուղացուն ձնշելով: Հարստահարելով: Այսպիսով Սալտիկովի պատմվածքը ցուց ե տալիս բուրժուական համայնքի դասակարգացին հիմնավորումը, այսինքն պարզաբանում, բացատրում և ընթերցողին հենց այն բանը, ինչ վոր կրոնն աշխատում ե խնամքով թաքցնել ու քողարկել զանազան դատողություններով, թե բոլոր մարդիկ համահավասար են աստծու առաջ:

Այս լերկու գրական լերկերի համեմատությունը ցուց ե տալիս, վոր արվեստը կարող ե ուժեղ զենքինել ինչպես կրոնը պաշտպանելու, այնպես ել նրադեմ պարզաբերու համար: Յեվ պետք ե ասած, վոր կրոնը միշտ ամենալայն կերպով ոդտվել ե և ոգտվում ե արվեստով իր շահերը պաշտպանելու համար: Բուրժուական գրողների, նկարիչներն ու լերաժիշտները մեծ ծառայություն են մատուցանում կրոնին, աջակցելով նրան տիրանալու աշխատավորների զբացմունքներին:

Իր աղոթատները, տաճարներն ու վանքերը բուրժուազիան կառուցանում ե գեղեցիկ ու հոյակապ: Ամենալավ նկարիչներն են նկարազարդում այդ շենքերը: Յերբեմն իրենց լեկեղեցական նկարներով նոքաձեռք են բերել մեծ հոչակ: Նշանավոր ոուս նկարիչ-

ներ Նեստերովը, Վասնեցովը, Վրուրելն և ուրիշներն իրենց լերկերով ղարդարել են մեծ լեկեղեցիներն ու մայր տաճարները։ Նկարիչները, բացի տաճարները նկարազարդելուց, նկարում ելին և կրոնական բնութիւնատկերներ (իվանով, Կրամսկով, Գել և ուրիշներ), վորոնք մեծ տպավորութիւնն են գործել դիտողների վրա և հենց դրանով ել նպաստել ամրապնդելու նրանց մեջ հավատն առ աստված։

Իր ժամասացութիւնները նույնպես կրոնն աշխատում են կատարել վորքան կարելի լեռ շքեղ ու փառավոր, վորպեսզի ավելի ուժեղ ազդի հավատացլաների զգացմունքի վրա։ Շատ կոմպոզիտորներ (լերաժշտական լերկերի հեղինակներ) գեղեցիկ լեղանակներ են հորինել լեկեղեցական ժամերգութիւնների համար, ձախնազրելով աղոթքներն ու ժամերգութիւնները։ Որինակ, հոչշակավոր կոմպոզիտոր Զայկովսկին հորինել է շատ լեղանակներ պրավուլավ լեկեղեցու աղոթքների համար։ Կրոնն իր լեկեղեցիներում կազմակերպում են մեծ, լավ պատրաստված լերգեցիկ խմբեր, հրավիրելով մասնագետ-լերգիչներ։ Կաթոլիկ կրոնն իր ժամերգութիւնների համար ոգտագործում են և լերաժշտական գործիքներ—լերգեհոն (օրգան), թեկեղեցական զգեստների—շուրջառների համար պատրաստվում են հատուկ շքեղ կտորներ—փարչա, վոսկով ու արծաթով ասեղնագործած։ Պատկերները, լեկեղեցական իրերն ու զգեստները զարդարում են թանգարին քարերով—աղամանդներով, զմրուխտներով, մարգարիտներով և այլն։

Այս բոլորը ցույց են տալիս, թե կրոնը վորքան լայն կերպով ոգտվում էր և ոգտվում են արվեստից, վորպեսզի աղջեցնի իր փառահեղութիւնը ու լենթարկի իրան աշխատավորների զգացմունքները։

Ալսպիսով՝ արվեստը կապիտալիստական կարգերում զորավոր միջոց ե հանդիսանում մասսաների կրօնական ստրկացման համար:

Կաթոլիկ կրօնը կազմակերպում եր ու մինչև այժմ ել դեռ կազմակերպում ե կրօնական ամբողջ թատերական ներկայացումներ («միստերիա»), վոր պատկերացնում ելին Քրիստոսի կյանքից զանազան դեպքեր:

Կինոն համեմատաբար արվեստի նոր ձև եւ Բալց կրօնը նրա պոչից ել պինդ բռնել եւ Ամերիկայում մոտ ժամանակներս ցուցադրվում եր Քրիստոսի կյանքը պատկերացնող մի կինոնկար, վոր նստել ե Յ միլիոն ռուբլի:

Կրօնական կազմակերպությունները վոհ մի ծախքի առաջ կանգ չեն առնում, վորպեսզի արվեստն իրենց ձեռը գցեն ու ստիպեն նրան ծառայել իրենց շահերին:

Մոտ ժամանակներս իտալիայում կազմվեց «Կինոմատոգրաֆիական կրօնական ընկերություն», վոր գտնվում ե Հռովմի պապի հատուկ հովանավորության տակ: Ընկերության նպատակն ե պատրաստել սրբերի կյանքը, կրօնական քարոզիչների գործունելությունը և այլն պատկերացնող կրօնական կինո-նկարներ:

Թաշիստական իտալիայում, բանվորներին խեղողող Մուսովինի կարգադրությամբ Հռովմի մի քանի փողոցներում շինված են նկարների ձեռլ ահագին ծաղկանոցներ, վոր պատկերացնում են Քրիստոսին ու սրբերին:

Դեռ ավելին. անգլիական «Դեյլի-Տելեգրաֆ» թերթը մոտ որերս հաղորդեց, վոր անգլիական մի քանի յեկեղեցիներում յերիտասարդության համար կազմակերպվում են պարեր, վորոնց միջոցին արտասանում

Են կրոնական քարոզներ: Տերտերները վոչ մի բանի առաջ կանգ չեն առնում, միայն թե հնարավորություն ունենան վորեւ կրոնական աշխատանք կատարել:

Մենք արդեն խոսեցինք կրոնական գործունելության աշխատացման մասին մեզտնում, վոր առաջ յեկավ դասակարգալին պալքարի սրման հետևանքով: Հետաքրքիր են նշել, վոր ալդ աշխատացման մեջ ել կրոնական կազմակերպությունները դարձալ չեն կարողանում լոլա գնալ առանց արվեստի ոգտագործման: Մի կողմ թողնելով տերտերների ու աղանդավորների հրատարակած բազմաթիվ հոգեպարագա գըրքերն ու պարբերական թերթերը, մենք տեսնում ենք, թե ինչպիսի լեռանդով յեկեղեցու պաշտոնական կազմակերպում են ամեն տեսակի գեղարվեստական կրուժուկներ: Յեկեղեցական ու աղանդավորական համալինքներին կից կազմակերպվում են յերաժշտական ու յերգեցիկ խմբեր, նվազախմբեր և ալյու: Դեռ 1922 թվին չեւավոր արևելքի բարտիստներն ունելին յերկու նվագախումբ ու 14 յերգեցիկ խմբեր:

Աղանդավորների մեջ ներկալիս շատ տարածված են գեղարվեստական յերեկույթների, կոնցերտների կազմակերպումը: Այդ յերեկույթներում տեղի յեն ունենում յերգեցողություն, գեղարվեստական ընթերցանություն և նույն իսկ պարեր (ճիշտ ինչպես անգլիական յեկեղեցիներում):

Այսպիսով կրոնը միշտ ոգտվել ե ու այժմ ել շարունակում ե ոգտվել արվեստից, ավելի հաջող կերպով գրավելու համար աշխատավորների համակրանքը:

Ահա թե ինչու արվեստը չի կարող անմասն մնալ բանվորներին ու գլուղացիներին կրոնի իշխանությունից ազատելու գործում:

Կրոնի դեմ պայքարը գրականության ու արվեստի անմիջական պարտականությունը պիտի լինի, յեզ նոքա այս գործում պետք է ուղղմական տեղ գրավեն գիտության ու դպրոցի հետ մի շարժում:

ՊԱՅՔԱՐԸ ԿՐՈՆԻ ԴԵՄ—ՊԱՅՔԱՐ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

Այենավերջին ժամանակներս ԽՍՀ Միության մեջ հայտնաբերվեցին մի շարք հականեղափոխական լեկեղեցական կազմակերպություններ:

Աստրախանում հականեղափոխական խմբի գլուխն եր անցած միջիպապ արքեպիսկոպոսը՝ Յարոսլավի, Ռիբինսկի, Ալեքսանդրովի ու Կիշնեի շրջանում գործող հականեղափոխական կազմակերպությունը ղեկավարում ելին՝ Յարոսլավի արքեպիսկոպոս Ռոշենցեցեմը ու Կիշնեի լեպիսկոպոս Գոլուբեցը՝ Վյատկայի լեկեղեցական-մանարխիստական կազմակերպության գլուխն եր Վյատկայի լեպիսկոպոս Վիկտորը:

Լիկվիդացիալի լենթարկված «Ռուկրայինալի ազատության միություն» հականեղափոխական կազմակերպության ղեկավարների շարքումն եր գտնում ավտոկեֆալ լեկեղեցու առաջնորդ Զեխովսկիին։ Հյուսիսային Կովկասում բացված ռազմական միապետական կազմակերպությունը գործում եր «իմյասլավ» կրոնավարդապետական աղանդի ցուցանակի տակ¹:

Բոլոր այս փաստերը մի ավելորդ անգամ ևս հաստատում են կրոնի իսկական նշանակությունն ինչպես զենք դասակարգային թշնամու ձեռին։

Ահա թե ինչու ներկայիս սոցիալիստական արշավի

¹ Բոլորին հայտնի յե նույնպես Փեղորովոյիների գործը Վարոնեժում և ներքինիներինը—լենինդրագում։

ուժեղացած տեմպերը, կուլակութիւննն իբրև դասակարգ վոչնչացնելու խնդրի գործնական վորոշումը, — պարտադիր են դարձնում ուժեղացնել և՛ հակակրոնական պայքարը:

Սոցիալիստական շինարարության հաջող զարգացումն ինքնին արդեն հարձակումն ե կրոնի դեմ: Կապիտալիստական հարաբերությունների մնացորդների արմատախիլ անելը նշանակում ե վոչնչացնել և կրոնի արմատները: Մարտնչող անաստվածների դեռ 1929թվի հունիսին տեղի ունեցած Համամիութենական II համագումարը վորոշում հանեց հակակրոնական աշխատանքի հերթական խնդիրների առթիվ, ուր ասված ե՝

«Մարտնչող անաստվածների միությունը, լինելով վճռ միայն պրոպագանդիստական կազմակերպություն, այլ և իբրև առաջավոր մի վաշտ սոցիալիստական շինարարության ու նոր կենցաղի ֆրոնտում, պետք ե ամենաակտիվ մասնակցություն ունենա տեղական անտեսական կյանքում ու կամպանիաներում, վորանց են կացնում կուսակցությունն ու Խորհրդակին իշխանությունը, իր ամբողջ աշխատանքն որգանապետականի հնգամյա պլանի գործնական իրականացման հետ»:

Սոցիալիստական շինարարության հնգամյա պլանի իրագործումը վճռական նշանակություն կունենա կրոնի դեմ մղվող պայքարի համար: Ամենալետամնացրանվորն ու գլուղացին կհամոզվեն, վոր աշխատավորների կոլեկտիվն իր առաջ դրված խնդիրներն իրագործում ե բացառապես իր սեփական ուժերով, իր կամքով ու եներգիայով, առանց վորևե «աստծու ոգնության»: Սոցիալիստական հնգամյա պլանի կատարումը լիովին կհերքի լեկեղեցու ուսմունքն «աստ

վածտլին նախորոշմանց մասին (ճակատագիր) և ցուց կտա հավատացլալներին, վոր նոր կյանքի կառուցումն ամբողջապես լեթարկվում ե մարդու իշխանությանը:

Մարտնչող անաստվածների Ա համագումարն հաստատեց Միության կենտրոնական Խորհրդի վորոշումը տրակտորալին կալոննա հիմնելու համար 10 հազար ռուբլի հատկացնելու առթիվ, ընդումին հանձնարարելով կենտրոնական Խորհրդին՝ լայն կամպանիա սկսել անաստվածների տրակտորալին կալոննայի կառուցման միջոցներ հայթալիթելու համար:

Տրակտորների արդ հզոր կալոննան վոչ միայն նոր ձեռվ պիտի վարե արորի սովոր գլուղացու հողն, այլ և նոր, անաստվածի տեսակի պիտի վերակառուցի գլուղացու գիտակցությունը:

Անաստվածների Ա համագումարը վորոշեց Միության անունը փոխել և դնել «Մարտնչող անաստվածների Միություն»։ Դրանով համագումարը մի ավելցորդ անգամ ևս ընդգծեց կրոնի դեմ ընդհանուր, լարված անհաշտ պայքար մղելու անհրաժեշտությունը:

«Քանի գոյություն ունեն դասակարգերն իրենց տարբեր շահերով, քանի դեռ գոյություն ունի մարդը մարդու ձեռքով շահագործելու հնարավորությունը,— չեն կարող ընդմիշտ մեռնել կրոնի արմատները։

Միայն սոցիալիզմը, միայն դասակագերի վոչնչացումը կմատնի կրոնին լիակատար մահացման։ Ահա թե ինչու մենք՝ ԽՍՀ Միության անաստվածներս կրոնի դեմ մեր պայքարը սերտ կերպով կապում ենք սոցիալիզմի համար մղվող պայքարի հետ։

Զպիտի լինի վոչ մի կոմիերիտասարդ, վոչ մի կուսակցական, դասակարգայնորեն գիտակից վոչ մի պրո-

իետար, պղոփմիության անդամ, վոր չտանի հակակրունական աշխատանք»:

Այսպես և ասված Երարտնչող անաստվածների Միության Ա համագումարի կոչի մեջ, վոր ուղղված ե ԽՍՀ Միության բոլոր աշխատավորներին, բոլոր բանվորներին, գլուղացիներին ու Կարմիր բանակալիններին։ Անաստվածների Ա համագումարն արտահայտվեց և հոգուտ այն տեսակետի, վոր «անհրաժեշտ և առանձին ուշագրություն դարձնել, վորպեսզի հակակրոնական աշխատանքի ներգրավել և գիտության ու արվեստի աշխատավորներին»։

Պալքարը կրոնի գեմ արդեն գրավել և աշխատավորների միլիոնավոր մասսաներ։ Յեկաղեցականների բոլոր փորձերը յետ մղել կամ խափանել իրենց համար կորստաբեր սոցիալիստական արշավը, միշտ վերջանում են անհաջողությամբ։

Հակակրոնական ֆրոնտում մեր տարած հաղթանակներին իրեւ ապացուց ծառալող փաստերի մենք հանդիպում ենք ամեն քայլափոխում։

Ձերժինսկու և «Պրավդա»-ի անվան գործարանների (Ուկրաինա) 20 հազար բանվորներ վորոշեցին Կամենսկ գլուղում փակել յեկաղեցին, կաստելը, սենագոգան ու կիրկան։

Բանվորների բազմիցս պահանջների հիման վրա կիևի քաղխորհուրդը վորոշեց Կիևո-Պեչորայի լավրայի (մենաստան) տերիտորիայից ու մյուս վանքերից աքսորել այնտեղ ապրող բոլոր վանականներին, վարդապետներին ու կուլսերին և լավրան ել փակել։

Որեխովս-Զուլեկի շրջանի բանվորները վորոշեցին վակել շրջանի չորս ամենամեծ յեկաղեցիները։

Սմոլենսկում 5 հազար հրաներ պահանջեցին փակել սինագոգան և շենքը հատկացնել ակումբի։

Բաշկիրյան հանրապետության Բիրսկ կանտոնում
աշխատավորների պահանջով փակված են 7 լեկեղեցի
և 45 մեջիտ:

Ցեկեղեցիները փակելու շարժումը մասսայական
բնույթ ստացավ: Հենց միայն վերջին կիսամյակում
աշխատավորների պահանջով փակված են 3000 զա-
նազան լեկեղեցիներ ու աղոթատներ:

Բայց կրոնական թունից ազատված, կրոնական
ուսմունքների խաբերայությունն ու կրոնի դասա-
կարգային թշնամությունը հասկացած բանվորներն
ու գյուղացիները չեն սահմանափակվում միայն զա-
նազան դավանությունների լեկեղեցիները փակելու
պահանջը դնելով: Կրոնական վարակիչ ախտի այդ
վորջերի տեղ աշխատավորները կառուցում են նոր,
սոցիալիստական կենցաղ, քար քարի վրա դնելով
բարձրացնում են հոյակապ շենքը նոր, սոցիալիստա-
կան համայնքի:

Վարոնեժի շրջանի Դոլգի գյուղում համայնական
ժողովը վորոշեց փակել լեկեղեցին ու զանգակները
ծախելով, ստացված փողով համայնքի համար առնել
գյուղատնտեսական մեքենաներ:

Սարատովում աշխատավորների պահանջմամբ փակ-
վեց մայր լեկեղեցին ու շենքը հատկացվեց գյուղա-
տնտեսական ինստիտուտի համար գիտական կամի-
նետ շինելու:

Մողդոկ քաղաքում բնակիչները վորոշեցին փակել
տեղի հայոց մայր լեկեղեցին ու շենքում բանալ կոմ-
իտասարդական ակումբ:

«Մալողեմելլան» տունդրաներում սամոյեդների հա-
մագումարը վորոշեց Տելլվիսոչնի գյուղում փակել լե-
կեղեցին, իսկ նրա տեղ բանալ «սամոյեդների տուն»:

Դնեպրոպետրովսկի տասնլակ հազարավոր բան-
վորների կամքով փակվեց տեղի սինագոգան և նրա
շենքում բացվում ե կար անողների ակումբ: Հետա-
քրքիր և նկատել, վոր շենքը ակումբի վերածելու հա-
մար Դնեպրոպետրովսկի կար անող բանվորները վորո-
շել են աշխատել չորս տոն որեր:

Դնեպրոպետրովսկի շրջանի Իվանովկա գյուղում յե-
կեղեցուց վերցրել են դանդն ու ծախելով Ռուգմետալ-
տորդին, ալդ փողերով գնել են ռադիոընդունիչ և գրա-
դարան խրճիթ-ընթերցարանի համար:

Նախկին Կոլոմենսկի կանանց մենաստանի շենքը
վերածված ե հացի ելեվատորի, վոր աշխատում ե ամ-
բողջ թափով:

Սերպուխովի հինգ փակված յեկեղեցիների շենքերը
շինել են հացի շտեմարաններ:

Ակտյուրինսկի շրջանի գյուղերի աղքատ ու միջակ
գյուղացիները հանձնել են կուլտուրական հիմնարկ-
ների համար քսանից ավելի յեկեղեցիներ ու աղոթա-
տներ: Իրկուտսկի և Տվերսկի շրջաններում գյուղա-
ցիները փակված յեկեղեցիների շենքերում բաց են
անում հիվանդանոցներ, ակումբներ ու գրադարաններ:

Հյուսիսային Կովկասի անաստվածները մուծելով 405
ոռուրի տրակտորային կալոննաներ կազմելու համար,
կոչ են արել մյուս հիմնարկներին հետևել իրենց ո-
րինակին:

Լենտրոնա-սևահողային մարզը մրցման ե հրավիրել
Ներքին-Վոլգայի անաստվածներին: Մրցման խնդիրն
ե՝ տրակտորային կալոննա կառուցելը: Բազվի անաստ-
վածները մրցման են հրավիրել լենինգրադյաներին,
իսկ լենինգրադի անաստվածները՝ մոսկովյաներին:

Հիշենք և այն, վոր չափաղանց տարածված մի շար-
ժում և դառել լեկեղեցիների զանգերը վերցնելն ու
հանձնելը ԽՍՀ Միության ինդուստրացման կարիքնե-
րին գործածելու:

Հակակրոնական պալքարի լեն զինակոչվում և
լուսավորության ու կրթության հիմնարկները: Լենին-
գրադում Գորկու անվան Մոսկովո-Նարվյան կուլտու-
րայի տանը կից հանդիսավոր կերպով բացվեց ԽՍՀ
Միության առաջին հակակրոնական բանվորական հա-
մալսարանը: Այդ համալսարանի լերեք հարցուրից ա-
վել ուսանողների շարքում (Լենինգրադի գործարան-
ների բանվորներ) կան 47 կին:

Իննը հակակրոնական բանվորական համալսարան-
ներ հիմնվում են Մոսկալիի շրջանում: Վրաստանում,
Թիֆլիսի բանվորական համալսարանին կից, բացվում
և անսաստվածների բաժանմունք:

Կրոնի վերջնական տապալումը մոտենում և ավելի
ու ավելի արագ քայլերով: Մենք պետք ե լեռանդուն,
անդուլ ու համառ աշխատանքով ամեն կերպ արագաց-
նենք այդ տապալումը:

Նոր կենցաղի համար մղվող պայքարի մեջ, կրոնի դեմ
տարվող պայքարի մեջ ամենազործունյա մասնակցու-
թյունը պիտի ունենան մեր կուլտուրական հեղափոխու-
թյան բոլոր ուժերը, նրանց բվում դպրոցը, արվեստը,
գրականությունն ու գիտությունը: Նոքա չեն կարող յեվ
չպետք է մեկուսի մնան մարտնչող հակակրոնական ա-
խատանքից՝ դա կնօւնակեր դասային դասակարգային
պայքարի դաշտից:



[104]

Գիրք 10 կոչ. ($1\frac{1}{2}$ մ.) Մաս.

6 [A—I
4346



Б. М. Макаров
БЕЗ РЕЛИГИИ
или
ПРОТИВ РЕЛИГИИ
Госиздат ССР Армении
Эривань, 1930 г.
